

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Մանր գիւղատնտեսութիւնը եւ նրա կարիքները

Գիւղատնտեսութիւնն և մասնաւորապէս մանր կամ գիւղացիական գիւղատնտեսութիւնն կարիքները և նրանց առաջադիմութեան խանգարող պատճառների ուսումնասիրութիւնը վերջին ժամանակներս Ռուսաստանում դէպի իրան է հրաւիրել թէ կառավարութեան, թէ տեղային հաստատութիւնների, և թէ գրականութիւնն առանձին ուշադրութիւնը: Եւ հասկանալի է թէ ինչու:

Յայտնի է, որ Ռուսաստանը երկրագործական երկիր է: Նրա բնակիչների աւելի քան  $4/5$  մասը պարապում և ապրում է գիւղատնտեսութեամբ: Ռուսաստանից արտահանուող ապրանքների արժեքի  $80\%$  նոյնպէս կազմում են գիւղատնտեսական նիւթեր: Պետական մուտքերի գլխաւոր աղբեկը էլի նոյն գիւղացին է. և վերջապէս խոշոր արդիւնագործութիւնը (ինդուստրիան) ունենալով իւր ապրանքների սպառողները դարձեալ նոյն գիւղացին՝ նոյնպէս անմիջապէս կախում ունի գիւղատընտեսութիւնն զարգացման աստիճանից: Հասկանալի է, որ գիւղացու տնտեսական դրութիւնը որքան բարւոք լինի, այնքան մեծ կը լինի նրա պահանջը և հետևապէս նաև արդիւնագործութիւնն նիւթերի գործածութիւնը:

Նպատակ գնելով մեր այս լոդուածում տալու համառօտ տեսութիւն մանր գիւղատնտեսութիւնն, նրա առաւելութիւնների և պակասութիւնների, նրա ապագայի և կարիքների մասին, նախ և առաջ որոշենք, թէ ո՞ն է մանր գիւղատնտեսութիւնը:

Առհասարակ ընդունուած է գիւղատնտեսութիւնը բաժանել 3 տեսակի. մանր, միջակ և խոշոր: Ի՞նչը ընդունել իրեւ չափ այս բաժանման, անա հարց, որի նկատմամբ տնտեսագէտների կարծիքները տարբերում են: Պէտք է նկատել, որ հողի քանակութիւնը դեռ չէ որոշում գիւղատնտեսութիւնն մանր կամ խոշոր լինելը: Օրինակի համար, Ղոկմում 10 դեսետին հող ունեցողը կարող է համարուել խոշոր հողատէր, իսկ նոյն 10 դեսետինը մի որևէ Վոլոգոդսկի կամ Սարատովի նահան-

գում հազիւ է կարող բաւարարութիւն տալ մի գիւղացու ընտանիքի պիտոյքներին։ Նոյնպէս տարբեր են՝ օրինակ՝ Գերմանիայում կամ Անգլիայում և Ռուսաստանում խոշոր և մանր գիւղատնտեսութիւն հասկացողութիւնները։ Ուրեմն պէտք է գտնել ուրիշ չափ։

Իսու, օրինակ, առաջարկում է մանր համարել մէկ լուծ (մի ջուխտ եղ կամ ձի, չառյայք) ունեցող տնտեսութիւնները։ Երկուսը և աւելին՝ միջակ, իսկ խոշոր՝ երբ հողատէրը ինքը չի բանում, այլ միայն կառավարում է։ Պասսի իբրև չափ ընդունում է գութանների քանակութիւնը։ մանր տնտեսութիւնը չի կարողանում շահագործել նոյնիսկ մէկ գութանի ոյժը (10 գեսեատին հողի հերկումը), 1—2 գութան բանեցնողիննա համարում է միջակ, իսկ 2-ից աւելին խոշոր։ Ամենից ընդունուած է Ռոշերի բաժանումը։ Այս վերջինի համեմատ մանր է համարում այնպիսի տնտեսութիւն, երբ գիւղացին իր ընտանիքով առանց բանտրի օգնութեան կարողանում է վարել տնտեսութիւնը։ միջակ—երբ գիւղացու և նրա ընտանիքի ոյժերը բաւական չեն և պահանջում են բանտրներ, և խոշոր—երբ կառավարելը խում է հողատէրի բոլոր ժամանակը, և նա չի բանում ինքը իր ընտանիքով։

Եթէ Ռոշերի բաժանման մէջ մտցնենք և տնտեսութիւնից ստացած զուտ արդիւնքի չափը, կը ստանանք աւելի կատարեալ բաժանում։ Մանր գիւղատնտեսութիւնը—ստանում է այնքան զուտ արդիւնք, որ կամ չի բաւականացնում, կամ հազիւհազ է բաւականացնում նրանով պարագողների պահանջները։ Խոշոր—երբ մնում է աւելորդ արդիւնք, իսկ միջակը բռնում է այս երկուսի մէջտեղը։

Հարց է ծագում. այս երեք տեսակներից ո՞րն է աւելի կենսունակ, մըն է յաղթող հանդիսանում կեանքի կուռու և ինչն։

Ցայտնի է, որ արդիւնագործութեան վերաբերեալ այս հարցը վճռուած է խոշորի օգտին, իսկ գիւղատնտեսութեան վերաբերեալ դեռ սա վիճելի հարց է։ Այժմ համարեա բոլոր խոշոր քաղաքագէտները զբաղուած են այս հարցով։ Քաղաքագէտներից մի քանիսը, այսպէս կոչուած օրթօղոքս-մարկսիստները (օր.՝ Կառուտսկին) կողմնակից են խոշոր գիւղատնտեսութեան, իսկ միւսները (Հերց, Դաւիթ)՝ և սրանք կազմում են մեծամասնութիւնը—հիմնուելով ստատիստիկական հետազոտութիւնների վրայ զանազան երկրներում՝ ցոյց են տալիս, որ մանր և միջակ տնտեսութիւնների թիւը ոչ միայն չէ պակասում, այլ ընդհակառակը՝ աւելանում է։ օրինակ՝ Գերմանիայում,

Ամերիկայի Միացեալ-Նահանգներում, Ռուսաստանում և այլն, Այս վերջինում մենք նկատում ենք, որ ազնւականների հողերը պակասում են և անցնում են գիւղացիների և վաճառականների ձեռք: Միայն Ֆրանսիայում չէ նկատում առանձին հոսանք այս կամ այն կողմբ:

Ի՞նչ է այս երեսոյթի պատճառը, և ինչնու գիւղատնտեսութիւնը չի ենթարկում կենտրոնացման և կապիտալիզացիայի օրէնքներին, որոնք այնպիսի ոյժով գործում են արդիւնարերութեան ուրիշ ճիւղերի մէջ:

Այս զանազանութիւնը բացատրում է գիւղատնտեսութեան առանձնայատկութիւններով:

Նախեասած գիւղատնտեսութիւնը գործ ունի օրգանիզմ-ների—կենդանի մարմինների հետ, իսկ արդիւնագործութիւնը՝ նիւթերի հետ: Եւ այս պատճառով առաջինում չէ կարող տեղի ունենալ գործողութիւնների այնպիսի միատեսակութիւն, ինչպէս երկրորդում: Ամեն օրգանիզմ ունի իր առանձնայատկութիւնները, որոնց պէտք է ինկատի ունենայ գիւղատնտեսն իր գործունէութեան մէջ: Ահա ինչնու անսանապահութեան այն ճիւղերը, որոնք գործ ունեն ընտիր կենդանիների հետ, աւելի յարմար են համարում միջակ տնտեսութիւնների համար: Եւ մենք տեսնում ենք, որ արտասահմանի ցուցահանդէսներում առաջնակարգ կենդանիներ ներկայացնողները յաճախ գիւղացիներ ենլինում, որոնք և ստանում են պրեմիաներ:

Այն պայմանները, որոնց շնորհիւ խոշոր արդիւնագործութիւնը հակայական քայլերով առաջ է ընթանում և կանում մանրերին, երկրագործութեան վերաբերեալ խաղում են աւելի սահմանափակ դեր: Այսպէս են՝ աշխատանքի բաժանմունքը, գործելու անընդհատութիւնը և թանդ ու կատարելագործուած մեքենաների գործածութիւնը:

Շնորհիւ այն հանգամանքի, որ արդիւնագործութեան մէջ միենոյն բանւորն օրէցօր, տարէցտարի բանում է միենոյն մեքենայի մօտ, շինուամ է միենոյն բանը, վերջիվերջոյ դառնում է այդ մեքենայի կարծես մի մասը և հասնում է իր գործում մեծ ճարպիկութեան. նոյնը չէ գիւղատնտեսութիւն մէջ: Բացի այն, որ նա այստեղ գործ ունի աւելի բարդ մեխանիզմների հետ, նրա գործունէութիւնը այստեղ ընդհատում է և այսպէս ասած՝ սեղոնական է դառնում: Ռուսաստանում՝ օրինակ՝ այն օրերի թիւը, երբ տաքութիւնը 6 աստիճանից աւել է, այսինքն երբ կարող է տեղի ունենալ որևէ դաշտային գործունէութիւն, տատանում են 125 օրից մինչև 363 օր: Այս վերջին թիւը վերաբերում է միայն մի քառարտ, 1904.

Նի տեղերի: Բացի այն, որ գիւղացու գործունէութիւնը այսպէս ընդհատում է, այս վերջինս ունի և մի ուրիշ պակասութիւն: Գիւղատնտեսութեան մէջ զանազան գործողութիւններ չեն կարող տեղի ունենալ միաժամանակ, ինչպէս արդինազործութեան մէջ: Միաժամանակ չէ կարելի համ հերկել, համ ցանել, համ հնձել ևայն: Այլ այս բոլոր օպերացիաները կատարում են զանազան ժամանակներ և պէտք է կատարուեն շտապ և շուտ, որովհետև ձգձգել ժամանակը՝ նշանակում է կորցնել ստանալիք նիւթերի մի յայտնի մասը կամ նոյնիսկ ամբողջը: Գործունէութեան այս մեջը ստեղծում են խոշոր հողագործութեան համար մեծ անյարմարութիւններ: Յայտնի է, որ Ռուսաստանի հիւսիսային նահանգներից ամեն տարի հունձի ժամանակ հարիւր հազարաւոր հնձողներ դիմում են գէպի հարաւ, և չնայած սրան՝ հարաւային նահանգների խոշոր հողատէրերը գանգատում են բանտորների պակասութեան վրայ, և նոյնիսկ ուղում են, որ կառավարութիւնը ինքը միջամտէ այս հարցի մէջ և մի կերպ կանոնաւորէ նրան: Նոյն գանգատներն են լաւում և՛ ուրիշ երկրների խոշոր հողատէրերի կողմից: Շնորհիւ գործունէութեան ընդհատումներին և միաժամանակ աշխատանք կատարելու՝ անկարելիութեան՝ հողագործութեան մէջ կապիտալը աւելի դանդաղ է շրջում, ուրեմն պահանջում է կարճ ժամանակամիջոցում խոշոր կապիտալ: Գիւղատնտեսութեան գործունէութեան ժամանակաւորութիւնն է և այն բանի պատճառը, որ այս վերջինում մեծ և թանգ մեքենաների գործածութիւնը դանում է անձեռնուու: Տալ ահագին փող և առնել մեքենա, որ պէտք է գործի տարւայ ընթացքում միայն մի քանի տասնեակ օրեր և մնացած ժամանակ պարապ ընկնի—դա կապիտալիստի տեսակէտից անհեթեթութիւն է: Բացի այս, կան և ուրիշ պայմաններ, որոնք սահմանափակում են մեքենաների գերը հողագործութեան մէջ:

Հողագործը չէ կարող իր բոլոր գործունէութիւնը սահմանափակել մի յարկի տակ, ուր նա կարող լինի զնել հըսկայ մեքենաներ: Նրա մեքենաները պէտք է լինեն շարժուն և դրա համար էլ նրանք պէտք է ունենան պարզ կազմութիւն և սահմանափակ ծանրութիւն: Բացի այդ՝ գիւղատնտեսութեան մէջ կան գործողութիւններ, որ չի կարող կատարել ոչ մի մեքենա: Եւ մեսք տեսնում ենք, որ գիւղատնտեսութեան զարգանալով այսպիսի գործողութիւնների թիւը ոչ միայն չի պակասում, այլ ընդհակառակն՝ աւելանում է: Եւրոպայի շատ երկրներում հացահատիկների բոյսերի կուլ'տուրան կամաց-կամաց պակասում է, և այնտեղի տնտեսութիւններում աւելի և աւե-

Աի. Ին սկսում դեր խաղալ տեխնիկական բոյսերի (ճակնդեղ, հմել (գայլուկ, խմել), ծխախոտ, մեղ մօտ բամբակ ևայլն) կուլ' տուրան: Անասնապահութիւնը, մեղուարուծութիւնը, պարտիզանութիւնը հետագետէ նոյնպէս զարգանում են: Մի խօսքով՝ անտեսութիւնները ընդարձակ (էկսպենսիւ) կուլ' տուրայից անցնում են խտացածի (ինտենսիւ): Իսկ այս վերջինում մեքենաների գործածութիւնը բոլորովին չնշն է: Մինչև այժմ՝ օրինակ՝ դեռ չկան կով կթելու, բամբակ կամ ծխախոտ հաւաքելու, նրանց քաղաքաներու համար մեքենաներ: Գիւղատընտեսը՝ հակառակ արդիւնագործութեան, որ ձգտում է՝ որբան կարելի է մասնակի (սպեցիալ) դառնալ—աշխատում է բազմակողմանի դարձնել իւր սննդեսութիւնը՝ դրդուած շատ պայմաններից: Այդ պահանջում է նրանից ընդհանուր արդիւնքի շափը մ'եծ փոփոխութիւններից ազատելու ցանկութիւնը:

Յայտնի է, որ զանազան բոյսերը միատեսակ չեն վերաբերում թէ ջրի քանակութեան, թէ տաքութեան և թէ զանազան թշնամիններին բուսական և կեդանական աշխարհից: Աճեցընելով զանազան բոյսեր և կենդանիներ՝ նա, գիւղատնտեսը, իրան ազատում է թէ բնութեան և թէ ջուկայի զանազան պատահականութիւններից: Տարբեր բոյսեր աճեցնել է պահանջում նոյնպէս և՛ հողը լաւ ու բազմակողմանի շահագործելու ցանկութիւնը:

Մենք գիտենք, որ բոլոր բոյսերը կերակրուում են միենոյն նիւթերով, բայց նիւթերի գործածութեան շափը զանազան բոյսերի համար տարբեր են: Կան բոյսեր, որոնք մեծ քանակութեամբ կլանում են կալի (ճակնդեղ, արևածաղիկ, ծխախոտ), ուրիշները լուսածնական թթու, կիր, բորակածնային նիւթեր ևայլն: Բացի այդ, ինչպէս Հելլը կելլը ցոյց տումց, կան բոյսեր (թիթեռնակերպ ընտանիքին պատկանող), որոնք հողից ոչ միայն բորակածին չեն վերցնում, այլ նոյնիսկ հարստացնում են նրան այդ նիւթերով: Հիմնուելով դէպի զանազան գործոնները բոյսերի կողմից տարբեր վերաբերություն վրայ՝ գիւղատնտեսը պէտք է միենոյն հողի վրայ բուսցնի զանազան տեսակ, նոյնիսկ զանազան ընտանիքների պատկանող բոյսեր, որպէսզի ամենաձեռնուու կերպով շահագործի նրան: Այս տեսակ տնտեսութիւնը կոչւում է պատղափոփիս տնտեսութիւն (Ուծութեան համար առաջարկություն), իսկ յայտնի կարգով բոյսերի միմիանց փոխարինելը—շրջացան (շետակություն):

Այսքանս գիւղատնտեսութեան առանձնայատկութիւնների

մասին։ Այժմ տեսնենք, թէ ինչ առաւելութիւններ և պակասութիւններ ունեն մանր և խոշոր հողագործութիւնները։

Մանը հողագործութեան առաւելութեան պէտք է վերագըրել հետևեալը։ 1) նրա աւելի պակաս կախումը շուկայից, որովհետեւ մանր հողագործի գլխաւոր նպատակն է ստանալ իր և իր ընտանիքի պիտոյքների համար անհրաժեշտ նիւթերը։ 2) մանր տնտեսութեան՝ ալսպէս ասած՝ առաձգականութիւնը, որի շնորհիւ մանը, չունենալով մեծ ինվենտար, աւելի հեշտէ ենթարկում փոփոխութիւնների։ 3) մանրի ուսումնասիրութեան հեշտութիւնը, և վերջապէս, որ ամենազլիսաւորն է, այստեղ աշխատողը լինելով ինը հողագործը, որը նաև ամբողջապէս տէր է իր աշխատանքի արդինքին, աւելի մեծ ուշադրութեամբ ու եռանդով է բանում։ Այս վերջին յատկութիւնը կառուտակու կարծիքով մանր երկրագործութեան վատ կողմն է։ Այդ այդպէս կը լինէր, եթէ իսկապէս գիւղացին բանէր իր ուժից վեր։ Բայց բաւական է, ասում է մի ուրիշ էկոնոմիստ, տեսնել, թէ ի՞նչ ուրախութեամբ է բանում գիւղացին, իր հողի վրայ, որպէսզի հասկանանք, որ աշխատութեան չափազանցութեան մասին խօսք անգամ չէ կարող լինել։ Իսկ այն առաւելութիւնները, որ ունի խոշոր գիւղատընտեսութիւնը մանրի համեմատութեամբ, ինչպէս օրինակ՝ մեծ և կատարելազործուած մեքենաների գործածութիւնը, մասնագէտների գիտութիւնով օգտուելը, նիւթերի ծախսքը աւելի լաւ կազմակերպելը ևայլն, սրանք շնորհիւ զանազան ընկերակցութիւնների կամ կորպորացիաների հեշտանում են և՛ մանը հողատէրերի համար։

Գիւղատնտեսական գիտութեան վերջին տասնեակ տարիներում արած առաջադիմութիւնները (որոնք Զոմբքարտի կարծիքով՝ նոյնիսկ սկզբունքով աւելի կարևոր են, քան շոգու բազմակողմանի գործադրութիւնը) և նրա տարածելու ձեւերի զարգացումը դիւրացնում են և՛ մանը հողատէրերի համար գիտութեան բարիքներից օգտուելը։ Բաւական է յիշել կիրիսի և Հելլիդելի արած գիւղատները և նրանց հետևանքները, որպէսզի համաձայնուենք Զոմբքարտի հետ։ \*) յիշած երկու գիտնականների շնորհիւ մանը հողագործն էլ ստացաւ գիւղութիւն լաւացնելու իր հողի յատկութիւնները, առանց որ դիմի թանգ և երկար ժամանակ պահանջող բարելաւութիւնների։

Առաջներում, նոյնիսկ երբ անտեսութեան համար անասնաբուծութիւնը ձեռնտու չէր, այնուամենայնիւ պահում

\*) Ցես «Մուրճ»-ի № 2-ում մեր յօդուածը։

էին ահազին քանակութեամբ կենդանիներ՝ հողը պարարտացընելու համար աղբ ստանալու նպատակով։ Այժմ շնորհիւ հանքային պարարտացնող նիւթերի գործածութեան և բորակածին հաւաքող բոյսերի աճեցնելուն, գիւղատնտեսը աղատուել է այդ անհրաժեշտութիւնից։ Այդ նիւթերը իրանց ներգործութիւնը բերքի վրայ ցոյց են տալիս հետեւել տարին։

Վերջացնելով սրանով մեր խօսքը մանր գիւղատնտեսութեան առաւելութիւնների մասին՝ այժմ տեսնենք, թէ ի՞նչ կարիքներ ունի Ռուսաստանի մանր գիւղատնտեսութիւնը և ի՞նչպէս է կարիքի նրա արդիւնաբերութիւնը աւելացնել և նրան հանել այժմուայ աղքատ դրութիւնից։

Դեռ հարիւր տարի սրանից առաջ մի յայտնի գերմանացի գործիչ և մեծ կալուածատէր, երբ նրան հարցրին, թէ «ինչու է ժողովուրդն աղքատ», պատասխանեց. «որովհետև նա տգէտ և անուս է»։ Արտասահմանում վաղուց է արդէն հասկացուել ուսման անհրաժեշտութիւնը և նրա բարերար աղղեցութիւնը ժողովրդի տնտեսական դրութեան վրայ, և այդ պատճառով այնտեղ միջոցներ չեն խնայում այդ գործի համար։ Իսկ մեզ մօտ, ասում է պրոֆ. Զուլպրովը \*), գեռ այժմս էլ զեմստվային նահանգներում նորակոչ զինուորների կէսը, իսկ միւսներում երկու երրորդականը անգրագէտ են։ Բացի այդ, գիւղացին Ռուսաստանում դրուած է և ուրիշ աննպաստ պայմաններում։ Գիւղացիները մեզ մօտ կազմում են մի առանձին դասակարգ՝ զուրկ մի քանի արտօնութիւններից. այդ պայմանները նրան դարձընում են անընդունակ, ամենառաջ կող և այլն։

Համեմատենք՝ օրինակ՝ ամերիկացու վերաբերմունքը գէպի ֆիզիկական աշխատութիւնը առհասարակ և գիւղատնտեսութիւնը մասնաւորապէս և ուսւ հասարակութեան վերաբերմունքը։ Ամերիկացին մեծ յարգանքով է վերաբերում ամեն մի աշխատանքի։ Շատ ուսանողներ այնտեղ ամառուայ արձակուրդներին գնում են գիւղեր և մտնում զանազան տնտեսութիւններ իրեւ հասարակ բանտոր. կան և այնպիսիները, որոնք ձմեռը դասախոսութիւններից յետոյ որևէ մի հիւրանոցում սպասաւորի պաշտօն են կատարում։ Բաւական է իշեւ, որ Միացեալ նահանգների 21 նախագահներից 15-ը եղել են ֆերմերների որդիք, որոնցից 10 նոյնիսկ հասարակ գիւղացիների որ-

\*). Պրոֆ. Զուլպրովը Պարիզի ուսաց բարձր. ուսումն. կատարել է մի շաբք դասախոսութիւններ և մանր գիւղատնտեսութեան և նրա կարիքների մասին, որից մենք օգտական ենք մեր այս յօդուածը գրելիս։

գիք, որպէսզի հասկանանք թէ այստեղ ինչպիսի տարր է պարապում գիւղատնտեսութեամբ:

Խսկ Ռուսաստանում ով որ անընդունակ է, ով որ «մարդ չի գառնում», մնում է տնտեսութիւնը կառավարելու: Այսպէս է թէ մասր և թէ խոշոր տնտեսութիւններում: Այսպիսի պայմաններում ոչինչ զարմանալի բան չկայ նրանում, որ Ռուսաստանում գիւղատնտեսութիւնը գտնում է աղքատ դրութեան մէջ, —որ գիւղացին չէ կարողանում օգտուել այն միջոցներով, որոնց շնորհիւ գիւղատնտեսութիւնը արտասահմանում առաջադիմում է այնպիսի հսկայական քայլերով:

XIX դարի երկրորդ կէսը գիւղատնտեսական գիտութեան առաջադիմութեան հետ միասին ցոյց տուեց նոյնպէս այդ գիտութեան բարիքները ժողովրդի մէջ տարածելու ձեւերը և միջոցները: Գիւղատնտեսական ընկերութիւններ, կորպորացիաներ, որոնց միջոցով գիւղացին թէ առնում և թէ ծախում է զանազան նիւթեր աւելի ձեռնոտու կերպով, շրջիկ ուսուցիչներ-մասնագէտներ, որոնք իրանք են ման գալիս և գտնում գիւղացոն և նրան բացատրում ու ցոյց տալիս գիտութեան գործադրութիւնը գիւղատնտեսութեան մէջ, մասնագիտական թերթեր, դասախոսութիւններ և այլն և այլն, ահա միջոցներ, որոնցով այնպէս լայն չափով օգտում են Արևմուտքում: Այդ բոլորի շնորհիւ Գերմանիայում, օրինակ, չնայած ազգաբնակութեան արագ աճելուն, բերքը համեմատաբար ոչ միայն չի պակասում, այլ բարձրանում է: Պրուսիայում 1879-85 թ. ամեն մի հոգու տարեկան ընկնում էր 185 կիլոգրամ ցորեն և հաճար, իսկ 1886-95 թ. 201 կիլոգրամ և սրա հետ միասին աճում է և ուրիշ բոյսերի (գետնախճառի, ճակնդեղի և այլն) կուլ'տուրան: Աճում է նոյնպէս և կովերի, խոզերի և ոչխարների թիւը:

Խոտի և արմատապտուղների աճեցնելու շնորհիւ հանգըստացող հողի քանակը հասցրուած է տոնիստ-ի: պարարտացը նող նիւթերի, աւելի լաւ և զտուած սերմերի գործածութիւնը՝ բերքը հասցրել է շատ բարձր աստիճանի: Բացառութիւն չէ 200-250 պուդ ցորեն և 600-700 պուդ խոտ բերք մի դեսեատինից:

Բոլորովին ուրիշ պատկեր է ներկայացնում գիւղատնտեսութիւնը Ռուսաստանում: Բերքը գիւղացու արտերում հազիւ է հասնում 30-40 պուդի: Հողի ամբողջ երրորդ մասը հանգըստանում է: Արօտատեղերը հերկում են, անասնապահութիւնը ընկնում է: Պակասում է գիւղացու կերպակուրը: Այժմ Ռուսաստանի 50 նահանգներում ստացում է 7% օ, կենտրոնական սեւահող նահանգներում 33% օ, իսկ արդիւնագործական նա-

հանգներում 21°/₀,—աւելի պակաս, քան ստացւում էր 1861-65 թւականներին:

Շատերը գիւղատնտեսութեան անկումը Ռուսաստանում բացարում են սակաւանողութեամբ և ասում են, որ ոռու գիւղացիների հող ձեռք բերելը գիւղացիական բանկերի միջոցով և գիւղացիների գաղթականութիւնը Սիրիր, Կովկաս և Անդրկասպիան երկրները կարող է ազատել գիւղատնտեսութիւնն այդ վիճակից: Թէ որքան դանդաղ են գործում այդ միջոցները, ցոյց են տալիս հետեւեալ թւերը. քսան տարւայ ընթացքում գիւղացիների հողը աւելացել է 3,5°/₀: Սիրիր են գաղթել 16 տարւայ ընթացքում 1,207,000 հոգի, այսինքն աւելի քիչ, քան աճում է Ռուսաստանի ազգաբնակութիւնն ամեն տարի:

Եթէ մինչև անգամ ենթադրենք, թէ որևէ մի հրաշքով Ռուսաստանի բոլոր հողը կ'անցնի գիւղացիների ձեռքը, ասում է պրոֆ. Չուպրովը, այն ժամանակ էլ այս վերջիններիս հողը կ'աւելանար միմիայն 40°/₀: Մինչդեռ ամենափոքր տեխնիկական կատարելագործութիւնները, ինչպէս են՝ աւելի լաւ սերմեր, հանքային պարարտացնող նիւթեր ևայլն, կարող են բերքի բանակը հասցնել առնուազն 100՝ պուդի, այսինքն՝ այժմուանին համեմատ աւելացնել երկուառուկէս անգամ: Այժմ գիւղացին 20—30 ըուբլի է տալիս և կապալով մի գեսեատին հող վերցնում-եթէ նա այդ հողը գործ դնի իր տնտեսութիւնը բարւոքելու համար և եթէ նա նոյնիսկ այդ բարւոքման շընորհիւ ստանայ նոյնքան, որքան որ կը ստանայ կապալով վերցըրած հողից, նա էլի աւելի օգուտ ունի. առաջին՝ նա կը լաւացնի իր հողի յատկութիւնները, իսկ երկրորդ՝ նա կը ինայի թէ սերմում և թէ աշխատանքում:

Անհրաժեշտ է, որ գիւղացին փոխի գիւղատնտեսութեան ներկայ ձևը. այժմ Ռուսաստանում իւրաքանչիւր տարի հողի ամրող երրորդ մասը չի մշակում, այլ հանգստանում է, իսկ միայն մնացած  $\frac{2}{3}$  մասն է մշակում (տրեխոլի): Մինչդեռ արտասահմանում վաղուց են թողել հողագործութեան այս ձևը և դիմել աւելի կատարեալ ձեի, որը կայանում է նրանում, որ փոփոխակի աճեցնելով խոտեր, տեխնիկական բոյսեր, արմատապուղներ ևայլն, հանգստացող հողի քանակը հասցըրւած է ամենանուազ, մինիմալ՝ չափի: Մշակութեան այդ հին սիստեմը փոխելու համար գիւղացուն պէտք է հասկացնել, սովորեցնել նրան հարկաւոր է նաև դրամով օգնել: Բայց մըտեղից ճարել այդ գրամը: Պէտք է դիմել արտասահմանեան երկրների օրինակներին, թէորիան և փրումը Արևելքում, ասում է պրոֆ-

Զուպրով, ցոյց են տալիս, որ այն կը եղիտային հիմնարկութիւնները, որոնք հիմնուած են աղքատ գասակարգերի համար, աւելի հաստատ և յուսալի են, քան այն հսկայ բանկերը, որոնք հիմնուած են հարուստների համար:

Խնայողական գանձարաններու գումարների արագ աճելը Ռուսաստանում ցոյց է տալիս, որ այստեղ էլ կան ազատ տեղային միջոցներ:

1904 թ. այդ գանձարաններում հաւաքուած փողի գումարը հասնում է մէկ միլիարդի: Բայց այդ փողերից գիւղացին չէ կարողանում օգտուել, որովհետև Ռուսաստանում չկան փոխատութեան գանձարաններ, գիւղական բանկեր և այլն: Լաւ ցոյց տալու համար, թէ ինչպէս է դրուած գիւղատնտեսութեան օգնելու գործը Ռուսաստանում և արտասահմանում, բերենք մի քանի թւեր. — գորտոր Կրիւգերի բրոշիւրից երևում է, որ Գերմանիայում 1896 թւին կային 240 ընկերութիւններ՝ գործիքներ գնելու համար, 1,067 ընկեր, և ում նիւթ, սերմ և պարարտացման նիւթեր գնելու համար, 1,458 արդիւնաբերով (սրանցից 1,366 կաթնատնտեսական նիւթեր ծախելու համար) և վերջապէս 4,000 մանր վարկային և գիւղական փոխատութեան գանձարաններ: Այս ընկերութիւններում մասնակցում էին միլիոնից աւել ինքնուրոյն տնտեսութիւններ: Բացի սրանից՝ կային 100-ից աւել շրջիկ մասնագէտներ: Շվեյցարիայում կան 2,500-ից աւել գիւղատնտեսական ընկերութիւններ: Փոքրիկ Դանիայում գործում են մօտ 1800 կաթնատնտեսական ընկերութիւններ, որոնք պահում են մասնագէտներ, հրատարակում են թերթեր և այլն: Շնորհիւ այսպիսի կազմակերպութեան՝ այնտեղ մի 15—20 տարւայ ընթացքում կաթնատնտեսութիւնը արել է ահազին առաջադիմութիւն: 1883 թւին Դանիայից արտադրուել է Անգլիա 4 $\frac{1}{2}$  միլիոն պուդ իւղ, իսկ 1900 թ.՝ 42 միլիոն: Նոյնն է Բելգիայում, Հոլանդիայում և այլն: Այս բոլոր երկրներում եկել են այն եղրակացութեան, որ մասնագէտներ պահելու և առհասարակ գիտութիւնը տարածելու համար ծախսած փողերը բերում են ամենամեծ տոկոսները:

Իսկ Ռուսաստանում, ուր աղքաբաննակութեան 100 միլիոնից աւելը ապրում է գիւղատնտեսութեամբ, 1898 թւին հաշւում էր միայն 320 գիւղատ. ընկերութիւններ: Բարեբախտաբար պէտք է ասել, որ վերջին տարիները Ռուսաստանում էլ է նկատում թէ գիւղատնտ. ընկ, և թէ մասնագէտների աւելանալը: Ինչպէս և ամեն բանում, այս բանում էլ առաջին տեղն են բռնում Եեհաստանը, Պրիվալեանդի նահանգները, իսկ

յետոյ այն նահանգները, որտեղ տեղային ինքնավարութիւններ կամ զեմստվօններ կան:

1903 թիւն նահանգական ազգոնոմներ կային արդէն 28 նահանգներում, իսկ գաւառական ազգոնոմներ 165 գաւառներում: Ուրեմն 34 զեմստվային նահանգներից մինչև 1904 թիւը չունեն նահանգական ազգոնոմներ միայն 6-ը: 11 նահանգներում գաւառների կէսից աւելը ունի ազգոնոմներ: Իսկ երկու նահանգներ չունեին և ոչ մէկը: Բացի սրանցից՝ կան կառավարութիւններ նշանակած մօտ 70 մասնագէտներ Ռուսաստանի զանազան մասերում: Նոյնպէս նկատում է զանազան ընկերութիւնների աճում. օրինակ՝ մինչև 1898 թիւն Ռուսաստանում կային միայն 30 գիւղացիական գիւղատնտեսական ընկերութիւններ, իսկ այժմ այդ թիւը հասել 320-ի. լայնանում է նոյնպէս այդ ընկերութիւնների գործունէութիւնը: Սրանք հիմնում են փորձնական ագարակներ, գիւղութեան են տալիս գիւղացիներին էժան ժամանակով գործիքներ, սերմեր և այլն: Չերք շնորհում են ցուցահանդէմներ, կազմակերպում են բոյսերի թշնամինների հետ կուելու միջոցներ, հիմնում են վարչային և սպառողական ընկերութիւններ, նպաստում են գիտութեան տարածնելուն ժողովրդի մէջ՝ գրադարաններ հիմնելով, զանազան մասնագիտական լրագրներ և բրոշիւրներ ձեռքբերելով և այլն:

Բերած թւերն այնքան պերճախօս են, որ բացարութիւնները աւելորդ են:

Աւելորդ չենք համարում յօդուածի վերջում ծանօթացնել ընթեցողին գիւղատնտեսութեան օգնութեան գործի գրութեան հետ և՝ կովկասում:

1903 թիւն կովկասում գործում էին՝ մէկ գլխաւոր ազգոնոմ և 3 կրտսեր ազգոնոմներ և հետևեալ հիմնարկութիւնները. Կովկասի Փիլոկսերային կոմիտեով ամերիկական խաղողի որթերի 5 տնկարաններով (ՊԻՏՕՄԱԿԵ. այս որթերը չեն հիւանդանում Փիլոկսերայով). մէկ սունկարանական (մակոլոգիական) լաբորատորիա իր մասնագէտներով, որտեղ քննուում են բոյսերի զանազան հիւանդութիւններն ու նրանց պատճառները և կուելու միջոցները. Թիվլիսի շերամապահական կայարանը և այգեգործական դպրոցը. մօտ 10 փորձնական կայարաններ և ցուցական ազարակներ կովկասի զանազան մասերում տեղացիներին բամբակի, ծխախոտի, թէյի և ուրիշ բոյսերի աճեցնելու խելացի միջոցների հետ ծանօթացնելու համար 5 մասնագիտական ուսումնարամներ: Բոլոր այս հիմնարկութիւնները, բացի Փիլոկսերական կոմիտեից, գտնուում

Են յասնագէտների ձեռքի տակ, Այս վերջինների պարտքն է ի միջի այլոց ուսումնասիրել տեղական պայմանները, գիւղատընտեսութեան կարիքները և ծանօթացնել ու օգնել գիւղատընտեսներին գիտութեան և տեխնիկայի նորութիւնների հետ ևայլու Բայց դժբախտաբար նրանք թէ իրանց սակաւութեան և թէ անհաւասար բաժանման (օր. Երևանի նահանգը շատ զուրկ է) և վերջապէս տեղական աղքաբնակութեան լեզուի ու սովորութիւնների հետ ծանօթ չլինելու պատճառով չեն կարողանում գիւղացուն տալ այն, ինչ նրան հարկաւոր է:

**Ագրոնոմ ԵՐ. ՍԱՐԴԱՐԵԱՆ**

---